

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
Բարձրագույն կրթություն առանց խտրականության. Բոլոնիայի
գործընթացը և եվրոպական արժեքները՝**

ՌԱՅՆԵՐ ՇՈՒԼՑ

Էսսեքսի համալսարան, Մեծ Բրիտանիա

Ստացված է 14.09.2015

Ընդունված է 21.02.2015

Հնդվածում ուսումնասիրվում են Բոլոնիայի գործընթացի հիմքում ընկած եվրոպական արժեքները: Չնայած դրանց կիրառման մակարդակը տարբեր է անդամ երկրներում, այդուհանդերձ չպետք է խտրականություն դնել դրանց միջև՝ ընտրելով որոշ արժեքներ և անտեսելով մյուսները, քանզի դրանք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված համընդհանուր արժեքներ են: Բարձրագույն կրթության ոլորտում առաջնային նշանակություն ունի հասարակության բոլոր խմբերի համար հավասար հնարավորությունների, հասանելիության և ներկայացվածության ապահովումն ուսումնական ծրագրերում: Բոլոնիայի գործընթացի արդյունքում ձևավորված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մաս չկազմող, այդ թվում՝ չճանաչված երկրները, կարող են և պետք է մոդելավորեն իրենց բարձրագույն կրթության համակարգերը Բոլոնիայի գործընթացի հիման վրա՝ ներառելով դրա հիմքում ընկած արժեքները կրթական բարեփոխումների ծրագրերում, ինչը գործընթացի ընձեռնած հնարավորությունների օգտագործման հիմքեր կստեղծի: Ներկայումս բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ որոշումները չճանաչված պետություններում և ԵՄ Արևելյան գործընկերության անդամ երկրներում անքակտելիորեն կապված են այն սկզբունքային որոշման հետ, թե այդ երկրների իշխանությունները հասարակության ինչպիսի գարգացման ուղի են ցանկանում տեսնել ԽՍՀՄ փլուզումից հետո:

Բանալի բառեր

Բոլոնիայի գործընթաց, Արևելյան գործընկերության տարածաշրջան, Եվրոպական բարձրագույն կրթական տարածք, չճանաչված պետություններ, եվրոպական արժեքներ, օրենքի գերակայություն, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ:

Կրթության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է՝ անկախ ճանաչված կամ չճանաչված պետության քաղաքացի լինելուց: Դա ամրագրված է ՄԱԿ Մարդու իրավունքների

* Հնդվածը «Բարձրագույն կրթություն առանց խտրականության. Բոլոնիայի գործընթացի համատեքստում» (Ստեփանակերտ, 28-29 հունիսի, 2014թ.) համաժողովում ներկայացված զեկույցի լրամշակված տարբերակն է:

համընդհանուր հռչակագրի (10 դեկտեմբերի, 1948 թվական) 26-րդ հոդվածում¹ և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (16 դեկտեմբերի, 1966 թվական) 13-րդ և 14-րդ հոդվածներում²: Միաժամանակ, և առաջին (26-րդ հոդված, 2-րդ կետ) և երկրորդ (13-րդ հոդված, 1-ին կետ) փաստաթղթերը կրթության իրավունքը կապում են հիմնարար արժեքների հետ. «Կրթությունը պետք է ուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է խթանի բոլոր ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնումը, հանդուրժողականությունը և բարեկամական հարաբերությունները, ինչպես նաև աջակցի ՄԱԿ-ին խաղաղության պահպանման գործում»:

Չնայած յուրաքանչյուրն ունի կրթության իրավունք, այդուհանդերձ այդ իրավունքն ինքնին չի ենթադրում, որ բոլոր երկրները պետք է անդամակցեն Բոլոնիայի գործընթացին և օգտվեն դրա ընձեռած հնարավորություններից: Եվրոպայում կրթության իրավունքը ճանաչվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով (20 մարտի, 1952թ.), որը հաստատում է, որ ոչ ոք չի կարող զրկվել կրթության իրավունքից³: Չնայած արձանագրության մեջ չի նշվում հիմնարար արժեքների մասին, սակայն Կոնվենցիան նախաբանում ուղղակիորեն անդրադառնում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին՝ «դրանում ամրագրված իրավունքների պահպանման և համընդհանուր ու արդյունավետ ճանաչման ապահովումը» հռչակելով իր նպատակը: Բոլոնիայի գործընթացն ուղղորդող փաստաթղթերից մեկի՝ Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը

¹ Universal Declaration of Human Rights, available at: <http://www.un.org/en/documents/udhr> (accessed 21 July 2014).

² International Covenant on Economic, Social and Cultural Rights, Available at: <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CESCR.aspx> (accessed 21 July 2014).

³ Convention on Human Rights and Fundamental Freedoms, Council of Europe, available at: <http://conventions.coe.int/treaty/en/Treaties/Html/005.htm> (accessed 21 July 2014).

վերաբերող որակավորումների ճանաչման մասին 1997 թվականի Լիսաբոնի կոնվենցիայի (Լիսաբոնի ճանաչման կոնվենցիա) նախաբանում օգտագործվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում բերված միևնույն ձևակերպումը. «Բարձրագույն կրթությունը պետք է եական դեր խաղա խաղադրության, փոխըմբռնման և հանդուրժողականության խթանման, ինպես նաև ժողովուրդների և ազգերի միջև փոխադարձ վստահության հաստատման գործում»⁴:

Բոլոնիայի գործընթացը մեկնարկել է 1999 թվականի հունիսի 19-ին: Հռչակագիրը ստորագրել են 29 եվրոպական երկրների կրթության նախարարներ: Չնայած Հռչակագրի գլխավոր նպատակը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) ձևավորումն է՝ միտված Եվրոպական բարձրագույն կրթության գրավչության և մրցունակության մեծացմանը, ուսանողների շարժունակության և նրանց աշխատանքի ընդունման հնարավորությունների խթանմանը, դրանում անդրադարձ է կատարվում նաև «Գիտելիքի Եվրոպայի» հիմնական չափանիշներին, այն է՝ «ընդհանուր աժեքներ» և «պատկանելություն ընդհանուր սոցիալական և մշակութային տարածքին»⁵:

Բոլոնիայի գործընթացը ներառում է և՛ ԵՄ, և՛ ոչ ԵՄ անդամ երկրներ (ներկայումս ներառում է 49 անդամ երկիր⁶): Գործընթացը հաճախ քննադատվում է Եվրոպական բարձրագույն կրթական համակարգի միջազգային մրցունակության և գրավչության մեծացման անհրաժեշտությունը չափազանց շեշտադրելու, մասնավորապես՝ առաջնային տնտեսական օրակարգ ձևավորելու, գլխավորապես տեխնիկական ասպեկտների վրա կենտրոնանալու (կրեդիտային համակարգ, գիտական աստիճանների համադրելիություն, որակի ապահովման համակարգի ստեղծում, անձնակազմի և ուսանողների

⁴ Convention on the Recognition of Qualifications concerning Higher Education in the European Region, Council of Europe, available at: <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/165.htm> (accessed 21 July 2014).

⁵ The Bologna Declaration of 19 June 1999: Joint Declaration of the European Ministers of Education, available at: http://www.bologna-berlin2003.de/pdf/bologna_declaration.pdf (accessed 21 July 2014).

⁶ Անդամ երկրների ցանկը՝ <http://www.ehea.info/members.aspx> (accessed 21 July 2014).

շարժունակության ապահովում), ինչպես նաև եվրոպական մշակույթին ու արժեքներին սուկ «արջի ծառայություն մատուցելու» համար⁷: Այդուհանդերձ, մի շարք պաշտոնական փաստաթղթեր ուղղակիորեն կամ անուղղակիորեն անդրադառնում են Եվրոպական համայնքների և Եվրամիության հիմնադիր փաստաթղթերում ամրագրված այնպիսի արժեքների, ինչպիսիք են ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, օրենքի գերակայությունը և մարդու համընդհանուր իրավունքների նկատմամբ հարգանքը: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում 2009 թվականին կայացած նախարարների մակարդակով հանդիպման ժամանակ հստակորեն ներկայացվեց Եվրոպական բարձրագույն կրթության քաղաքականությունների սոցիալական հարթությունը և կոչ արվեց տրամադրել որակյալ կրթության հավասար հնարավորություններ, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում ընդլայնել ընդհանուր և մեծացնել թերի ներկայացված խմբերի մասնակցությունը⁸: Տիգրան Թորոսյանն արդարացիորեն Բոլոնիայի գործընթացն անվանում է «քաղաքակրթական ծրագիր»⁹:

Բոլոնիայի գործընթացին մասնակցությունը յուրաքանչյուր երկրի կամավոր որոշումն է: Բոլոնիայի հռչակագիրը չունի համաձայնագրի կամ կոնվենցիայի իրավական ուժ, ինչի արդյունքում ստորագրող երկրները իրավական տեսանկյունից պարտավոր չեն

⁷ **Lorenz C.**, Will the universities survive the European Integration? Higher Education Policies in the EU and in the Netherlands before and after the Bologna Declaration, available at:

http://www.i.umich.edu/UMICH/ces/Home/Resources/Michigan_Paper_Series/Lorenz_Will_Universities_Survive.pdf (accessed 21 July 2014).

⁸ Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Leuven and Louvain-la-Neuve, 28-29 April 2009: The Bologna Process 2020 – The European Higher Education Area in the New Decade, Article 9, available at: http://www.ehea.info/Uploads/Declarations/Leuven_Louvain-la-Neuve_Communique_April_2009.pdf (accessed 21 July 2014).

⁹ Tigran Torosyan, 'The Bologna Process as an Important Factor in Post-Communist Transformation and Conflict Resolution'. «Բարձրագույն կրթություն առանց խտրականության. Բոլոնիայի գործընթացի համատեքստում» (Ստեփանակերտ, 28-29 հունիսի, 2014թ.) համաժողովում ներկայացված գեկույց, որի լրամշակված տարբերակը **Torosyan T., Vardanyan A.**, Development Paradigm for the Post-Communist Countries in Higher Education and Political Science, *Armenian Journal of Political Science*, 2014, 1, 5-22.

հետևել դրա նպատակներին և խնդիրներին: Տարբեր երկրներում դրանց կիրառման մակարդակն ու առանջնայնությունները տարբեր են: ԵԲԿՏ-ի մաս չկազմող այն երկրները, որոնք ցանկանում են իրենց բարձրագույն կրթական համակարգը մոդելավորել Բոլոնիայի գործընթացի բարեփոխումների հիման վրա, չեն բախվում որևէ խոչընդոտի: Ավստրալիան ներկայումս այդ ճանապարհին է: Կրթության, ուսուցման, մշակույթի և երիտասարդության հարցերով ԵՄ հանձանակատարի և Ավստրալիայի կրթության և գիտության նախարարի միջև 2007 թվականին ստորագրված համատեղ հռչակագրի արդյունքում՝ ուղղված բարձրագույն կրթության ոլորտի կապերի ամրապնդմանը¹⁰, Նոր Հարավային Ուելսի Մաքքուերի համալսարանը դարձավ առաջին ավստրալական համալսարանը, որն իր գիտական աստիճանների համակարգը համապատասխանեցրեց Բոլոնիայի գործընթացին (հունվար, 2013թվական)¹¹:

Չճանաչված երկրները հեշտությամբ կարող են հետևել այդ մոդելին, և դրա համար նույնիսկ անհրաժեշտ չէ նախնական համատեղ հռչակագիր: Այդուհանդերձ, Բոլոնիայի գործընթացին անդամակցելը չի նշանակում միայն բարձրագույն կրթական համակարգի ներմուծում՝ հիմնված բարձրագույն և հետբուհական ծրագրերի, թափանցիկ կրեդիտային համակարգի ձևավորման, որակի և համադրելիության ապահովման, ինչպես նաև ուսանողների ու անձնակազմի շարժունակության խթանման վրա: Դա նաև ենթադրում է Բոլոնիայի գործընթացի հիմքում ընկած եվրոպական արժեքների որդեգրում և դրանց զարգացում: Բոլոնիայի գործընթացի հիմքում ընկած են ընդհանուր արժեքներ, չնայած տարբեր փաստաթղթերում դրանց տրված անորոշ ձևակերպումներին: Գործընթացն ավելին է,

¹⁰ Joint Declaration on Education, 18 April 2007, available at: http://eeas.europa.eu/delegations/australia/eu_australia/political_relations/agreements/joint_declaration_on_education/index_en.htm (accessed 21 July 2014).

¹¹ **Harrison D., and Rosenberg J.**, No longer content to share the honours, *The Sydney Morning Herald*, 22 November 2011, available at: <http://www.smh.com.au/national/education/no-longer-content-to-share-the-honours-20111121-1nqor.html> (accessed 21 July 2014); Research Training: New Postgraduate Model, available at: http://mq.edu.au/about_us/faculties_and_departments/faculty_of_arts/mhpir/modern_history/masters_of_research-mres (accessed 21 July 2014).

քան պարզապես ներլիբերալ քաղաքականությունների ընդլայնումը, գիտելիքի նյութականացումը կամ բարձրագույն կրթության շուկայականացումը: Բոլոնիայի գործընթացի ընձեռած հնարավորություններից օգտվել ցանկացող երկրները ոչ միայն պետք է դրա հիմքում ընկած արժեքները կիրառելու պատրաստակամություն հայտնեն, այլև առաջին քայլերն անեն առկա թերությունները վերացնելու ուղղությամբ:

Կոսովոն կրթական բարեփոխումների իրականացման բարդությունների և մարտահրավերների օրինակ է: Երկիրը պաշտոնապես Եվրոպայի խորհրդի Եվրոպական մշակութային կոնվենցիայի և Բոլոնիայի գործընթացի անդամ չէ: 1999 թվականից հետո Կոսովոյի բարձրագույն կրթության ոլորտի վերակառուցման գործընթացին աջակցում էին բրիտանական համալսարանները՝ Կրթության և զբաղվածության հարցերով Մեծ Բրիտանիայի վարչության ֆինանսական օժանդակությամբ՝ ուղղված նոր ուսումնական ծրագրերի մշակմանը Պրիշտինայի համալսարանում՝ Կոսովոյի առավել կարևոր բարձրագույն կրթական հաստատությունում¹²: 1990-ական թվականներին Կոսովոյում դե ֆակտո առկա էր կրթական խտրականություն: Պրիշտինայի համալսարանում ուսուցումը բացառապես սերբերեն էր, չկային էթնիկ ալբանացի ուսանողներ, իսկ պրոֆեսորադասախոսական կազմի ալբանացի ներկայացուցիչներն ազատվել էին աշխատանքից: Արդյունքում վերջիններս ստիպված էին մշակել զուգահեռ գործող կրթական համակարգ՝ հաճախ անցկացնելով մասնավոր դասընթացներ: 1999 թվականի պատերազմից հետո Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարման առաքելությունը (UNMIK) փորձեց «ապաքաղաքականացնել և ժողովրդավարացնել գործող համակարգը»՝ քաջ գիտակցելով, որ (բարձրագույն) կրթությունը «առանցքային դեր

¹² **Bache I., and Taylor A.**, The Politics of Policy Resistance: Reconstructing Higher Education in Kosovo, *Journal of Public Policy*, 2003, **23**, 279-300; **Kostovicova D.**, Kosovo: The Politics of Identity and Space, Abingdon, Oxon: Routledge, 2005; **Pichl E.**, The State of Higher Education in Kosovo. 1999, available at <http://cicic.ca/docs/en/app6.pdf> (accessed 21 July 2014).

կիսադա խաղաղության հաստատման գործում»¹³: Բաշը և Թեյլորն արձանագրում են այն խոչընդոտները, որոնց բախվեց բրիտանական աջակցության խումբը՝ փորձելով ստեղծել այնպիսի բարձրագույն կրթական համակարգ, որը համահունչ կլինի եվրոպական այլ համակարգերին և կարտացոլի UNMIK-ի՝ «Արևմտյան մոդելի վրա հիմնված բազմաէթնիկ, բազմակարծիք և ազատական համալսարանի պատկերացումը»¹⁴: Մասնավորապես էթնիկ ալբանացիների ավագ սերունդը կողմ էր այնպիսի ուսումնական ծրագրերի, որոնցում կարտացոլվեն ալբանացիների ազգային գաղափարները:

Ներկայումս իրավական առումով ամեն ինչ կատարյալ է: Կոսովոյի սահմանադրության 47-րդ հոդվածը երաշխավորում է կրթության իրավունքը և հանրային ինստիտուտներին պարտադրում է «ապահովել կրթական հավասար հնարավորություններ յուրաքանչյուրի համար՝ ըստ համապատասխան ընդունակությունների և պահանջների»¹⁵: Կոսովոյում գնչուների, ալբանախոս գնչուների (Ashkali) և եգիպտական համայնքների ինտեգրման վերաբերյալ ռազմավարական ծրագրում ընդգծվում է փոքրամասնությունների ընդգրկման անհրաժեշտությունը¹⁶, իսկ Կոսովոյի հնգամյա ժամկետով (2011-2016թվականներ) կրթական ռազմավարական ծրագրում նշվում է «որակյալ կրթության հավասար հասանելիություն ապահովող ներառական կրթական համակարգի» զարգացման և խթանման անհրաժեշտությունը՝ որպես կրթական քաղաքականության առաջնայնություններից մեկը¹⁷:

¹³ Focus Kosovo – Social Affairs, 2000 UNMIK Report, Bache L., and Taylor A., ..., p. 289.

¹⁴ Bache L., and Taylor A., ..., p. 290.

¹⁵ Constitution of the Republic of Kosovo, Article 47, available at: <http://www.kryeministri-ks.net/repository/docs/Constitution1Kosovo.pdf> (accessed 21 July 2014).

¹⁶ Strategy for the Integration of Roma, Ashkali and Egyptian Communities in the Republic of Kosovo 2009–2015 (December 2008), Republic of Kosovo, Office of the Prime Minister, pp. 20-25, available at: http://www.kryeministri-ks.net/zck/repository/docs/Strategy_for_the_Integration_of_Roma,_Ashkali_and_Egyptian_communities_2009-2015.pdf (accessed 21 July 2014).

¹⁷ Kosovo Education Strategic Plan 2011–2016, Republic of Kosovo, Ministry of Education, Science and Technology, p. 11, available at: http://www.masht.gov.net/advCms/documents/KESP_2011_2016.pdf (accessed 21 July 2014).

Սակայն իրականությունն այլ է: Կրթական համակարգերում դեռևս առկա են խտրական վերաբերմունքի դրսևորումներ: Ընդ որում, ազգային կամ ազգայնական մտածելակերպի վերածնունդը բնորոշվում է որպես կարևորագույն գործոն, որը վտանգում է կրթական համակարգում աշխատողների բոլոր ջանքերը՝ ուղղված դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում բազմաէթնիկ ներառական համակարգի ստեղծմանը:

Եվրոպայի խորհրդի Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական խարտիան, որի 8-րդ հոդվածը սահմանում է փոքրամասնությունների՝ իրենց մայրենի լեզվով կրթություն, այդ թվում՝ բարձրագույն կրթություն, ստանալու իրավունքը, հաճախ դիտվում է որպես վերոնշյալ խնդիրների լուծման հնարավորություն¹⁸: Սակայն Կոստվոյի և ընդհանուր առմամբ տարածաշրջանի փորձը փաստում է, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով տրամադրվող կրթությունը էթնիկ բաժանումները վերացնելու փոխարեն, առավել հաճախ կարող է մեծացնել էթնիկ խմբերի միջև առկա հակասությունները՝ հեշտությամբ հանգեցնելով հետևյալին.

- որոշ առարկաներից առանձին դասընթացների կազմակերպում տարբեր էթնիկ համայնքների պատկանող երեխաների համար,
- առանձին դասավանդվող առարկաների համար տարբեր ուսումնական ծրագրերի մշակում՝ նախատեսված միայն համապատասխան էթնիկ խմբի համար,
- տարբեր էթնիկ համայնքների պատկանող ուսանողների ուսուցման կազմակերպում առանձին կրթական շինություններում, այլ կերպ ասած՝ լիակատար ֆիզիկական տարանջատում:

Ընդ որում, այդ ամենը դրսևորվում է կրթության բոլոր մակարդակներում: Ներկայումս էթնիկ ալբանացի ուսանողները մեծ մասամբ հաճախում են Պրիշտինայի համալսարան, իսկ էթնիկ սերբ ուսանողները՝ Հյուսիսային Կոստվոյի Միտրովիցա շրջանի սերբալեզու

¹⁸ European Charter for Regional or Minority Languages, Council of Europe, available at: <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/148.htm> (accessed 21 July 2014). Կոստվոն դեռ չի վավերացրել այն:

համալսարան, որը հովանավորվում է Բելգրադի սերբական իշխանությունների կողմից և ներդաշնակեցված է բարձրագույն կրթության սերբական համակարգին¹⁹: Դա փաստում է, որ 1990-ական թվականներին տիրող իրավիճակը զգալիորեն փոխվել է: Էթնիկ սերբ ուսանողների զգալի մասը նախընտրել է դուրս գալ Կոսովոյի հիմնական կրթական հաստատություններից և ներկայումս հաճախում է Բելգրադի սերբական կառավարության կողմից հովանավորվող դասընթացներին: Դ. Կոստովիկովան եզրակացնում է, որ ինչպես 1999 թվականի պատերազմից առաջ, այնպես էլ դրա ավարտից հետո երկրում գոյություն ունեն կրթական խտրականություն. «UNMIK-ի նախնական փորձերը, ուղղված Կոսովոյի համալսարանի՝ որպես բաց և ժողովրդավարական հաստատության, վերաբացմանը բոլոր ուսանողների համար՝ անկախ էթնիկ պատկանելությունից, ձախողվեցին»²⁰:

Հավասարը չգործելու դեպքում առանձին կիրառման սկզբունքը հակասում է Բոլոնիայի գործընթացին: Ներառական կրթությունը բոլոր գիտական մակարդակներում ենթադրում է, որ ուսումնական ծրագրերը և ուսուցման միջավայրերը պետք է վերացնեն ազգային կամ էթնիկ բաժանումները և ապահովեն նախկին թշնամիների կամ հակառակորդների միմյանց հետ և միմյանցից սովորելու գործընթացը: Բոլոր չճանաչված երկրներին բնորոշ է բռնություններով ու պատերազմներով ուղեկցվող երկարատև պատմություն, սակայն այդ երկրները պետք է զիտակցեն, որ կողմերից ոչ մեկն անմասն չի մնացել կորուստներից, ուստի, ուսումնական ծրագրերը պետք է հիմնված լինեն յուրաքանչյուրի ցավի, փորձի և պատմության վրա:

Այդուհանդերձ, ներառական կրթությունը ենթադրում է ոչ միայն նախկին թշնամիների կամ հակառակորդների ընդգրկում հավասար

¹⁹ Համալսարանը պաշտոնապես կրում է Միտրովիցայի Պրիշտինա համալսարանի անվանումը՝ արտացոլելով Սերբիայի այն տեսակետը, որ դա Կոսովոյի մայրաքաղաքում գտնվող Պրիշտինայի համալսարանին առընթեր համալսարան է: **Brajshori M., and Jovanovic I.**, Kosovo, Serbia debate status of university in Mitrovica, *Southeast European Times*, 7 March 2013, available at http://www.setimes.com/cocoon/setimes/xhtml/en_GB/features/setimes/features/2013/03/07/feature-03 (accessed 21 July 2014).

²⁰ **Kostovicova D.**, ..., p. 208.

հիմունքներով, այլև հասարակության բոլոր խմբերի համար հավասար հասանելիության, հնարավորությունների և ներկայացվածության ապահովում ուսումնական ծրագրերում: Մասնավորապես, ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանի երկրների դեպքում ներառական կրթությունը ենթադրում է հետևյալ խմբերի խնդիրների լուծում:

Էթնիկ փոքրամասնություններ: ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանի մի շարք երկրներում էթնիկ փոքրամասնությունները շարունակում են բախվել մարզինա- լացման և խտրականության տարբեր, այդ թվում՝ կրթական խտրականության դրսևորումների: Գնչուները և հրեաները ևս հաճախ ենթարկվում են խտրականության ոչ միայն հասարակության, այլև երբեմն՝ գործող իշխանությունների կողմից: Հակասեմիտականությունը և հակագնչուականությունը սրվելու միտում ունեն այս երկրներում²¹:

Դավանանք: Արևելյան գործընկերության ծրագրի երկրների զգալի մասում գործում են ներպետական այնպիսի դրույթներ, որոնք երաշխավորում են կրոնի և հավատքի ազատությունը: Այդուհանդերձ, գործնականում հաճախ առկա են որոշ շեղումներ: Սովորաբար երկրում գերիշխող կրոնը օգտվում է մի շարք արտոնություններից, այդ թվում՝ կրթական ոլորտի, մինչդեռ այլ կրոնական խմբերը բախվում են սահմանափակումների և անհանդուրժողականության, որոնց կանխման համար չեն գործում համապատասխան սահմանադրական մեխանիզմներ: Էթնիկ փոքրամասնությունների ճանաչումը և նրանց նկատմամբ չափազանց մեծ հանդուրժողականության դրսևորումը մեծապես դիտվում է որպես ազգային ավանդույթներին և ինքնությանը ապառնացող վտանգ²²:

Կանանց իրավունքներ: Արևելյան գործընկերության ծրագրի երկրների մեծ մասին բնորոշ են ներպետական դրույթներ, որոնք ապահովում են սեռային հավասարություն: Չնայած դրանց

²¹ Yearbook 2010-11 Human Rights and Democratization Eastern Partnership Region, compiled by Benjamin Bronstein and Charlotte Freeman, Yerevan: Yerevan State University, 2011; Yearbook 2011-12 Human Rights and Democratization Eastern Partnership Region, compiled by Benjamin James Barnard, Yerevan: Yerevan State University, 2012, entries 'Ethnic Minorities' and 'Roma'.

²² Yearbook 2010-11, ..., entrie 'Freedom of Religion'.

առկայությանը՝ կանանց իրավունքները հետևողականորեն չեն պաշտպանվում: Կանայք շարունակում են բախվել խտրականության դրսևորումների զբաղվածության ոլորտում, և, չնայած արժանիքների վրա հիմնված բարձրագույն կրթության հավասար հասանելիությանը, վիճելի է՝ որքանով են կանանց խնդիրներն արժարժվում ուսումնական ծրագրերում և ընդհանուր կրթական միջավայրում, և դեռ որքան ժամանակ նրանք պետք է որդեգրեն տղամարդկանց ավանդական դիրքորոշումներն ու վարքը հաջողության հասնելու կամ առնվազն կանանց ավանդական դերերի՝ ուսուցիչ, բուժքույր և այլն, շրջանակով սահմանափակվելու համար²³: 2011 թվականի սեպտեմբերին Եվրոպական խորհրդարանը հայտնեց իր մտահոգությունը կապված մարդու իրավունքների զգալի խախտումների և համատարած խտրականության հետ՝ պայմանավորված սեռական կողմնորոշմամբ և սեռային ինքնությամբ և՛ ԵՄ, և՛ երրորդ աշխարհի երկրներում²⁴, իսկ ԵՄ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար և Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Քեթրին Էշթոնը Եվրոպական խորհրդարանին ուղղված իր հայտարարության մեջ նշում էր. «Եվրամիությունը պարտավորվում է ապահովել, որ յուրաքանչյուր ոք առանց որևէ խտրականության կարողանա օգտվել մարդու իրավունքների լիարժեք շրջանակից»²⁵:

Սահմանափակ կարողություններով անձանց իրավունքներ: Չնայած սահմանափակ կարողություններով անձանց խտրականության դեմ օրենքների առկայությանը՝ դրանք հազվադեպ են արդյունավետ կերպով կիրառվում: Սահմանափակ կարողություններով անձինք բախվում են սոցիալական խտրականության, ինչը սահմանափակում է նրանց կրթական (ներառյալ բարձրագույն

²³ Yearbook 2010-11, ..., entree 'Women'.

²⁴ European Parliament Resolution of 28 September 2011 on Human Rights, Sexual Orientation and Gender Identity at the United Nations Human Rights Council, available at: <http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P7-TA-2011-0427+0+DOC+XML+V0//EN> (accessed 21 July 2014).

²⁵ Statement by HR/VP Catherine Ashton to the European Parliament on 'Sexual orientation and gender identity at the United Nations Human Rights Council', Brussels, 28 September 2011, European Union, Document A 387/11, available at: http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/124774.pdf (accessed 21 July 2014).

կրթություն) իրավունքը: Սահմանափակ և ոչ սահմանափակ կարողություններով անձանց հավասարապես ընդգրկող ներառական կրթությունը շարունակում է բացառություն կազմել բոլոր մակարդակներում՝ երբեմն նաև դպրոցներում և բարձրագույն հաստատություններում թեքահարթակների բացակայության պատճառով, ինչի արդյունքում դժվարանում է սահմանափակ կարողություններով անձանց մուտքը դահլիճներ, դասասենյակներ և լաբորատորիաներ²⁶: Արևմտյան երկրներում իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ Միննոյն լսարանում տրամադրվող ներառական կրթությունը լավագույնս մեղմում է սահմանափակ կարողություններ ունեցող անձանց նկատմամբ անհանդուրժողականությունը, նախապաշարմունքներըն ու պիտակավորումը, ինչը հավասարապես լավ է թե՛ երեխաների, թե՛ ընդհանուր առմամբ հասարակության համար: Սահմանափակ կարողություններով անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի (2006 թվական) առաջին հոդվածը կարևորում է «սահմանափակ կարողություններով անձանց՝ մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից լիարժեք և հավասար սկզբունքներով օգտվելու խթանումը, պաշտպանությունն ու ապահովումը, ինչպես նաև ներքին արժանապատվության նկատմամբ հարգանքի երաշխավորումը»²⁷:

Կրթությունը պետք է էական դեր խաղա նախապաշարմունքների վերացման, խտրականության դեմ պայքարի, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու արժանապատվության և հավասար իրավունքների ապահովման համար պայմաններ ստեղծելու գործում: Դա հնարավոր է իրագործել բացառապես արժանիքների հիման վրա կրթության հասանելիության ապահովման ճանապարհով, ինչպես նաև կրթական ծրագրերի և կրթական միջավայրերի միջոցով, որոնք կսերմանեն այլ դիրքորոշումների, դավանանքի, վերաբերմունքի, կարծիքների նկատմամբ հանդուրժողականություն: Կրթությունն առանց խտրականության պարզապես չի նշանակում, որ չճանաչված պետությունները պետք է անմասն չմնան Բոլոնիայի գործընթացի

²⁶ Yearbook 2010-11, ..., entree 'Persons with Disabilities'.

²⁷ Convention on the Rights of Persons with Disabilities, available at:

<http://www.un.org/disabilities/convention/conventionfull.shtml> (accessed 21 July 2014).

առավելություններից: Դա նաև ենթադրում է, որ այդ երկրները (ինչպես ցանկացած այլ երկիր) չպետք է խտրական վերաբերմունք դրսևորեն այլ էթնիկ, սեռային, կրոնական և այլ պատկանելություն ունեցող անձանց նկատմամբ: Վերոնշյալը Բոլոնիայի գործընթացի հիմքում ընկած էական և անվիճարկելի արժեքների ամբողջություն է, որոնց հարգումն ու կիրառումը ընտրության ենթակա չէ, քանզի դրանք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված արժեքներ են:

Նոր եվրասիականության գաղափարախոս, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի՝ վերածնունդ ապրող Ռուսաստանի տեսլականի ետևում կանգնած ուղեղներից մեկը համարվող ռուս քաղաքագետ և փիլիսոփա Ալեքսանդր Դուգինը վերջերս կրկին ժխտեց համընդհանուր արժեքների գոյությունը՝ նշելով, որ դրանք իրականում «արևմտյան» արժեքներ են, որոնք Արևմուտքը փորձում է պարտադրել ամբողջ աշխարհին²⁸: Քանի որ Բոլոնիայի գործընթացն ուղղորդվում է Եվրոպական մշակութային կոնվենցիայով, և գործընթացին մասնակցությունը կամավոր է, եվրոպական արժեքների համընդհանրության խնդիրը տեղին չէ այդ համատեքստում: Այն երկրները՝ անկախ նրանից ճանաչված, թե չճանաչված, որոնք ցանկանում են օգտագործել Բոլոնիայի գործընթացի առաջարկված հնարավորությունները, գիտակցաբար ինտեգրվում են այդ գործընթացին և, հետևաբար, պարտավորվում իրենց կրթական բարեփոխումների մեջ ներառել ծրագրի հիմքում ընկած եվրոպական արժեքները:

Հումանիտար և հասարակական գիտությունները կենտրոնական դերակատարություն ունեն կրթական համակարգերը Բոլոնիայի գործընթացի հիմքում ընկած արժեքների հետ ներդաշնակեցման գործում: Հենց այդ ոլորտներում են առաջին հերթին արձարձվում իրավունքների, արժեքների և դիրքորոշումների վերաբերյալ խնդիրները: Սակայն, դա չի կարող իրականացվել սոսկ Կրթության նախարարությունից կամ կրթական ոլորտի առաջնորդների կողմից արձակված հրամանով: Ն. Սիգոնան և Ն. Թրեհանը, իրենց

²⁸ «Jeder Westler ist ein Rassist»: Spiegel-Gespräch mit Alexander Dugin, *Der Spiegel*, 29, 15 July 2014, 121-122.

ուսումնասիրություններում անդրադառնալով Եվրոպայում բնակվող գնչուների վիճակին և ապագայում նրանց լիարժեք ներգրավմանը կրթական համակարգերում, ընգծում են, որ դա պահանջում է դիսկուրսի նոր ձև տարածված դիրքորոշումների և տեսակետների վերափոխման համար. «Այդ երկխոսությունը պետք է դուրս գա գնչուների հավասարության ազատական քննարկումների շրջանակից և թևակոխի համագոյակցության դաշտ՝ որում ընդհանուր դպրոցները, աշխատատեղերը և միջավայրը կդառնան իրականություն գնչուների համար»²⁹: Նույնը վերաբերում է հասարակության բոլոր այն խմբերին, որոնք բախվում են նախապաշարմունքների, անհանդուրժողականության, մարզինալացման, խտրականության և մերժման: Հետևաբար, անհրաժեշտ է հասարակական դիսկուրսի մի նոր ձև, որը կներառի բոլորին՝ հավասար հիմունքներով:

Դիսկուրսի գերակայող օրինաչափությունները փաստում են, որ փաքրամասնություն կազմող խմբերի «այլությունը» կարծրացել է, ուստի, այդ օրինաչափություններում պահանջվում են հիմնարար փոփոխություններ հասարակության վերաբերմունքի և ընկալման վերափոխման համար: Փոքրամասնությունների իրավունքներն ընդգծելու փոխարեն, ինչը կարող է կարծրացնել իրական կամ երևակայական բաժանումները և սրել հակամարտությունները, անհրաժեշտ է կենտրոնանալ առկա խնդիրների հանրայնացման, համերաշխության և վստահության մթնոլորտի ձևավորման, ինչպես նաև միջէթնիկ, միջկրոնական, միջսեռային և այլ կապերի հաստատման վրա: Հարկադրված ձուլման վրա չհիմնված ընդհանուր ապագայի կառուցման համար դիսկուրսը պետք նաև ներառի տարբեր խմբերի միջև փորձի փոխանակումը, ընկալումն ու կիրառումը և վերադարձը բարձրագույն կրթություն՝ այդ ամենն արտացոլելով ուսումնական ծրագրերում և ընդհանուր կրթական միջավայրում:

Ակնհայտորեն, բարձրագույն կրթական զարգացումները չեն կարող մեկուսացվել տարրական և միջնակարգ կրթական

²⁹ **Sigona N., and Trehan N.**, Conclusion: A 'People's Europe' for Romani Citizens?, *Sigona N., and Trehan N., (eds.), Romani Politics in Contemporary Europe: Poverty, Ethnic Mobilization, and the Neoliberal Order*, Houndsmills, Basingstoke: Palgrave Macmillan, 2009, p. 294.

զարգացումներից: Ուսանողները բարձրագույն կրթական հաստատություններ են բերում այն կրթությունը, դիրքորոշումներն ու արժեքները, որոնք ձեռք են բերել համապատասխան տարրական և միջնակարգ դպրոցներում: Համալսարանները կառուցված են հենց այդ հենքի վրա: Եթե որևէ խմբի (աղջիկներ, սահմանափակ կարողություններով երեխաներ, այլ դավանանքի պատկանող երեխաներ և այլն) անհամաչափ թվով անդամներ չեն կարող ավարտել պարտադիր տարրական կրթությունը կամ չունեն միջնակարգ կրթություն, ապա նույնիսկ բարձրագույն կրթական մակարդակում իրականացված բարեփոխումների արդյունքում հնարավոր չի լինի ապահովել ցանկալի ներառական կրթություն: Ուստի, բարձրագույն կրթության տրամադրման գործում էապես կարևոր է՝ ինչ է կատարվում ավելի ցածր մակարդակներում:

Միայն իրավական և/կամ «տեխնիկական» հարցերին արձագանքելը բավարար չէ: Կրթության միջոցով նախապաշարմունքների նվազեցման և կրթությունն առավել ներառական դարձնելու գործում հասարակության բոլոր խմբերի համար հավասարապես կարևոր է խոսել միմյանց հետ, կիսել ունեցած հուշերն ու փորձը, և դրանք դարձնել համընդգրկուն և ներառական պատմամշակութային հիշողության կամ գիտակցության մի մաս: Ուսումնական ծրագրերը պետք է հիմնվեն այդպիսի ներառական հասարակական գիտակցության վրա:

«Պատմության միջոցով բժշկումը» փորձարկված և խրախուսելի միջոց է³⁰, սակայն դրա կիրառման համար անհրաժեշտ է այդ գործընթացում ներառված բոլոր կողմերի պատրաստակամությունը և կարողունակությունը: Մարզինալացված խմբերի մտահոգությունները հիմնավոր կերպով ձևակերպել է մի ռումինացի գնչու (Lilian Ignat Caransebes). «Մենք մշտապես պարտավոր ենք լսել մեծամասնությանը:

³⁰ The Initiatives of Change conference ‘Healing History – Overcoming Racism, Seeking Equity, Building Community’ in Caux, Switzerland, which included a workshop on ‘Listening to Unheard Voices: Roma in Kosovo’, available at: <http://www.caux.iofc.org/en/healing-history-0>; Projects such as ‘Healing Through Remembering’, available at: <http://www.healingthroughremembering.org>; ‘Healing Histories’, <http://www.healinghistories.com>; or ‘Healing the Wounds of History – Addressing the Roots of Violence’, available at: <http://www.healingwoundsofhistory.org> (all accessed 21 July 2014).

Մեզ երբեք լուրջ չեն ընկալում:... Ոչ միայն մենք, այլև բոլորս պետք է փոխվենք:... Մեզ անհրաժեշտ է օգնություն, սակայն այդ օգնությունը պետք է լինի մեր կողմից առաջարկված պայմաններով, այլ ոչ ինչպես ներկայումս է՝ ձուլման ճանապարհով»³¹: Նման ձևակերպում է ներկայացրեցլ նաև ակտիվիստներից մեկը. «Մենք ստեղծված իրավիճակի և ապագայի մի մասն ենք: Ուստի, եթե դուք մեզ հաշվի եք առնում, ապա պետք է ներգրավեք խաղի մեջ»³²: Ակնհայտորեն, վերոնշյալը վերաբերում է բոլոր մարզինալացված խմբերին:

Ոմանք կարող են պնդել, որ Բոլոնիայի գործընթացին ներկայումս չանդամակցող երկրները պետք է նախաձեռնեն այդ բարդ փոփոխություններն ու բարեփոխումները միայն այն բանից հետո, երբ ձեռք բերեն գործընթացին պաշտոնապես անդամակցելու երաշխիքներ: Նման մոտեցումն աղավաղում է ներառական (բաժնագույն) կրթության՝ հասարակության ցանկացած անդամին կարևորելու բնույթը: Դա այն «գինը» չէ, որը պետք է վճարել գործընթացի առաջարկած առավելություններից և հնարավորություններից օգտվելու համար: Բարեփոխումների գործընթացը կարող է նախաձեռնել ցանկացած հասարակություն, որը համարում է, որ դա կայուն, խաղաղ և ժողովրդավարական ընդհանուր ապագայի կառուցման, ինչպես նաև ներպետական և միջպետական հակամարտությունների լուծման ճիշտ ուղի է:

Բարձրագույն կրթությունը կարող է կարևոր դեր խաղալ այդ զարգացումներում: Այդուհանդերձ, ցանկացած գնով ճանաչման հասնելու և Բոլոնիայի գործընթացին ինտեգրվելու մեխանիզմների վրա կենտրոնանալու փոխարեն անհրաժեշտ է նախապես կամ առնվազն զուգահեռաբար ստեղծել ինտեգրման հիմքեր: Արտաքին խնդիրների լուծումն անհնար է առանց ներքին խնդիրների լուծման: Բոլոր երկրները պետք է ստեղծեն ամուր հիմք, որն իրական կորարձնի

³¹ **Nicolae V.**, *We are the Roma! One Thousand Years of Discrimination*, London: Seagull Books, 2013, pp. 83-84.

³² **Sigona N., Mustafa A., and Salijevic G.**, Being Roma Activists in Post-Independence Kosovo, *Sigona N., and Trehan N., (eds.), Romani Politics in Contemporary Europe: Poverty, Ethnic Mobilization and the Neoliberal Order*, Houndsmills, Basingstoke: Palgrave Macmillan, 2009, p. 212.

բարձրագույն կրթության պահանջներին և որակավորումներին ներդաշնակության ապահովումը: Հակառակ դեպքում, գործընթացը կկառուցվի դատարկ հենքի վրա:

Հոդվածը միտված չէ ցույց տալու, որ ամեն ինչ ներդաշնակ է ԵԲԿՏ-ում, և որ ներկայումս Բոլոնիայի գործընթացի անդամ երկրները լիարժեք կիրառում են դրա հիմքում ընկած եվրոպական արժեքներն իրենց կրթական բարեփոխումների ծրագրերում: Ընդհակառակը, մատնանշվում է այդ արժեքների կիրառման ուղղությամբ հստակ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը: Անկասկած, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մի շարք երկրներ թերահավատորեն են մոտենում որոշ, իսկ մի շարք դեպքերում՝ նույնիսկ բոլոր եվրոպական արժեքներին, և հրաժարվում են դրանց կիրառումից, ինչի արդյունքում կարելի է կարծել, թե այդ երկրները պետք է դուրս գան ԵԲԿՏ-ից: Սակայն նույնիսկ այն դեպքում, երբ դրանք շարունակեն այդ տարածքի մաս կազմել, նրանք անխուսափելիորեն կհայտնվեն մեկուսացված վիճակում, քանզի կասկածի տակ կառնվեն նրանց սահմանած չափանիշները և որակավորումները, անձնակազմի և ուսանողների շարժունակությունը կդառնա ավելի սահմանափակ, և այդ երկրներն այլևս ի վիճակի չեն լինի լիարժեքորեն օգտվել Բոլոնիայի գործընթացի ընձեռած հնարավորություններից:

Եզրակացություն

ԵԲԿՏ-ին ինտեգրումը երկարատև գործընթաց է: Չնայած, նույնիսկ Բոլոնիայի գործընթացում ակտիվորեն ներգրավված երկրներում եվրոպական արժեքների վերաբերյալ մեկնաբանությունները երբեմն տարբեր են, այդուհանդերձ, Եվրոպա աշխարհամասի զգալի թվով երկրների միավորում է ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների անձեռնմխելիության սկզբունքները:

ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանի երկրները, ինչպես բոլոր չճանաչված երկրները, բախվում են որոշ մարտահրավերների, քանզի ԵԲԿՏ-ի հիմքը կազմող եվրոպական արժեքների որդեգրման որոշումը սերտորեն կապված է այն հիմնարար որոշման

հետ, թե հասարակության ինչպիսի գարգացման ուղի են այդ երկրները ցանկանում տեսնել խորհրդային կարգերի տապալումից հետո: Անհրաժեշտ է նաև գտնել առաջընթացի գնահատման չափորոշիչներ, որոնք առավել հաճախ մշակվում են ոչ թե փորձագետների, այլ պետական պաշտոնյաների կողմից, ովքեր օգտագործում են այնպիսի «կարծր» միջոցներ, ինչպիսիք են փաստաթղթերը և հոչակագրերը, այլ ոչ թե իրական փաստարկներ՝ որքանով են այդ արժեքներն ու սկզբունքները փաստացի կիրառվում:

Երբ հետխորհրդային շրջանում ազդեցության գոտիների վերաբաժանման համար աշխարհաքաղաքական պայքարը վերաճում է ռազմական հակամարտության, ինչպես դա եղավ Վրաստանում 2008 թվականին կամ Ուկրաինայում 2014 թվականին ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների անձեռնմխելիության սկզբունքները հաճախ վերածվում են սոսկ գործիքների այդ պայքարում: Ուստի, այդ արժեքների և սկզբունքների կիրառման գնահատումը դառնում է ավելի բարդ, քանի որ կապվում է այն խնդրի հետ՝ թե ինչպես է կոնկրետ երկրում կամ տարածաշրջանում «հաղթողը» լինի դա ընտրություններում թե մեկ այլ մրցակցային պայքարում, տեսնում իր երկրի ապագան՝ «Եվրոպայի», թե՞ «Ռուսաստանի» հետ: Փաստացի, այդ որոշումը հաճախ ռազմավարական հաշվարկների արդյունք է՝ որ դեպքում հնարավոր կլինի ապահովել սեփական իշխանության պահպանման ավելի լավ նախադրյալներ, քան այս կամ այն կողմի արժեհամակարգի նկատմամբ հավատի կամ դրա ներմուծման պատրաստակամության արդյունք: Մեծ հաշվով բարձրագույն կրթությունը «փոքր խաղացող» է այդ մեծ պայքարում:

Higher Education Without Discrimination: The Bologna Process and European Values

RAINER SCHULZE

University of Essex, United Kingdom

This paper explores the European values underpinning the Bologna Process that all countries who participate in this Process are signing up to. Whilst acknowledging that the level of implementation of these values varies among the member states, the paper argues that it is not a question of choosing some of these values and disregarding others, but that they must not be separated as they are in fact the universal values set down in the Universal Declaration of Human Rights. It is paramount for an inclusive (higher) education that it provides equal access, equal opportunities, and equal representation in the curricula for all groups of society. Countries that are currently not part of the European Higher Education Area (EHEA) created by the Bologna Process, including the unrecognized or partially recognized countries, can and should nonetheless model their higher education systems on the Bologna Process by implementing these values in their educational reforms, which will create the foundations for them to benefit from the opportunities that the Bologna Process offers. However, at the moment decisions about higher educational reforms in unrecognized countries and the wider EU Eastern Partnership Region are inextricably linked to the fundamental decision about how the leaderships of these countries want to see their societies develop after the collapse of the Soviet order.